

մէջ, Գիրս՝ իբրեւ յուռուից զօրծածուած է շատ հին ժամանակէ։ Պարսկական աւանդութիւնը կը համարի, որ Յիսուս խոստացեր է Աբգարու, ուր որ նամակս գտնուի՝ ինքը զայն պիտի պաշտպանէ։ Բրիտանական Թանգարանի լատին ձեռագիրը կը թուարկէ պարագաները, ինչպէս եթէ մէկը իր հետ ունենայ նամակս՝ ապահով խաղաղութեամբ կը շրջի — «Si quis hanc epistolam secum habuerit, securus ambulet in pace»։ Անգղիոյ մէջ, կը պատմէ Քուրդոյն, թէ մինչև այս վերջին դարը սովորութիւն էր, որ տուներու մէջ նամակս կը փակցնէին պատերու վրայ իբրեւ նախապահաստ զեղ։ Դեռ չէ անհետացեր սովորութիւնն կոմսական եր. կիրենբուր մէջ, և իր հետքը կ'երևի կեղտ ծխաբանին մէջ, ուր Աբգարու նամակէն վերջ դուրսած է աղօթքս. «Տէր, Տէր, պաշտ»։ «պանեա զմեզ ի չարեաց, և պահպանեա «զմեզ ի բարիս. զի լիցուց որդիք քո աստ» և ի հանդերձելուսն. Փրկիչ ամենեցուն, «Քրիստոս, հայեաց ի մեզ, Յիսուս, և «ողորմեաց մեզ», և այլն։

Ս. Հարց մէջ, ինչպէս Ս. Օգոստինոս, Ս. Հերոնիմոս են, ընդհանուր կարծիք է, որ Յիսուս երկրիս վրայ իրեն ձեռագիր բան մը թողուցած չէր։

Աւելորդ կը համարի հեղինակը՝ մէջ բերել թղթակցութեանս վաւերականութեան պաշտպան հնապատումները, որոնք տեղեակ չէին Աղդէի վարդապետութեան հրատարակութեան։ Իրենց դատաստանը անբաւական ցուցումներու վրայ հաստատուած է։

Ռ. Կ.

~~~~~

«Աշխատէ կամ մեռիր»։ Այս է բնութեան նշանաբանը։ Եթէ դադրիք աշխատելէ մտաւորապէս՝ կը մեռիք բարոյապէս և նիւթապէս։

Զգայ բան մը որ հաստատամտութեան չափ օգտակար ըլլայ։ Հանճարն իսկ երբեմն կը վարանի, կը խաթարի, կը յոգնի. բայց հաստատամտութիւնը միշտ ապահով է որ պիտի շահի։

## ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## Ս. ԿԻՐՈՂԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻՈՅ

### ԿՈՉՈՒՄՆ ԸՆԺԱՅՈՒԹԵԱՆ

(Շար. տես 1921 թվ. էջ 950)

ԺԶ.

Էջ 26. տող 4. «Ներկաւ մարմին նորա ի ցօղոյ երկնից, քանզի մուտ, նայեցաւ ի նոց հրոյն՝ ուր անանիանքն էին. և ետես անդ զցօղ օղոյն, զի ցօղէր, և ոչ սրտի մտօք հաւատաց, այլ յետոյ... որպէս և ինքն պատմեաց»։

Ուղղ. — Նիկաւ ըստ յոյնին, ջնջելի մատ... այլ յետոյ իբրեւ ապաշխարութեամբ արդարացաւ (ըստ բնագրին)։

ԺԷ.

Էջ 27. տող 3. «Իցէ ոք, որ ուրացեալ իցէ ըստ Պետրոսին... մինչև խորհուրդան սփռեալ ի վերայք»։ Արտաքոյ երեւ բնարանին և խառնակ՝ որպէս հաւատի համեմատութեամբ այլ և այլ ձեռագրաց։ Ս. Հայրն արանց և կանանց օրինակ ապաշխարութեան կու տայ Նարեկագոհնոսոր, Դաւիթ և Ռախար. «Արդ եթէ ոք ի մեզ ի հեթանոսաց իցէ, որոյ զքրիստոնեայն հայհոյեալ իցէ... առցէ օրինակ զՆարեկագոհնոսոր... Եթէ իցէ ոք որ ի ցանկութիւն պղծութեան շաղախեալ իցէ, զերանելոյն զ'Խաթայ զապաշխարութիւնն յանձն առցէ... Արդ՝ կանանց առակ օրինակի իցէ ի փրկութիւն Բախար. և արանց որ միանգամ յառաջագոյն ասացաք, քաջքն և առաքինիքն օրինակ լիցին»։ Պետրոս ոչ ապաշխարութեան այլ ուրացողներուն դարձի օրինակ կը յիշուի, ինչպէս եկաւ մուտ հատուածի մէջ. — Իսկ «որոյ զքրիստոնեայն հայհոյեալ իցէ»։ լուազոյն է առել «գրիստոն», ըստ յոյն բնագրին։

## ԺԸ.

էջ 32. տող 6. «Աւղ՝ յորժամ իջա-  
նիցես ի ջուր անդր, մի՛ իբրեւ ի Թեթև  
ի դատարկ ջուր ինչ հայիցես, այլ ի զօ-  
րութենէ՛ն որոյ անտի փրկութեան ապաստ-  
ջիք»:

Ուղղ. մի՛ իբրեւ ի Թեթև և ի դատարկ...  
այլ և ի զօրութենէ՛ն Հոգւոյն են. վասն  
զի «ջուրն սրբէ զմարմինն, և Հոգին զըռշմէ  
զոգիան», որով ասել կամի թէ մկրտու-  
թեան ջուրը արհամարհելու չէ, իրբեւ պարզ  
առարկայ մը, այլ պիտի մտածել նաև թէ  
Հոգին սուրբ յաներևոյթս կը ներգործէ  
շնորհքով. «զի առանց երկոցունց անհնար  
է քեզ կատարեալ լինել»:

## ԺԹ.

էջ 36. տող 14. «Աւղ՝ եթէ զուցէ  
ոք ի ձեզ կեղծաւոր, մարդահանոյ, զհեզու-  
թիւն խոնարհութեան կեղծաւորութեամբ  
զգեցեալ, և ոչ սրտի մտօք հաւատացեալ  
զՎիմոնի կախարդի զկեղծաւորութիւն յան-  
ձին բարձեալ բերիցէ. իբր ո՛չ եթէ զի  
օգտուցի ի շնորհաց աստի, այլ զի խո-  
րամանկութեան ՔՆՆՈՒԹԻԱՆ զբարս ունիցի»:

Ուղղ. նշանակէ «խորամանկութեամբ  
լսիցէ զոր ընդունելոցն են»:

## Ի.

էջ 46. տող 12. «Եւ մի՛ զգայն գառն  
համարեալ որս նորա լիցուք, և զաստա-  
կիչ մահարեք բանսարկուն սատանայ  
հրեշտակ համարեալ՝ ընկրմեսցոք ի նմա-  
նէ»:

Յւղղ. ըմբռնեցոք՞ կամ սատակեսցոք:  
Եթէ Ս. Հայրս գայի և առիժի հետ կը  
հաղնմատէ զՍատանայ ինչ որ կ'երեւի  
բնագրէն, այն ատեն ըմբռնեցոք է ճիշտ  
իմաստն. զի «շուրջ գայ նա (սատանայ)  
իբրև գառիւծ մոնչելով». բնագիրն ունի  
պատասխի:

## ԻԱ.

էջ 47. տող. 13. «Իսկ հերետիկո-  
սացն մանկունք քաղցրաբան օրհնութեամբ  
պատրեն զսիրտս անմեղաց, իբրև մեղու  
քաղցրութեամբ ողջունին Քրիստոսի զամ-  
պարշտութեան զժանդախտուն կարգսն ծած-  
կեալ ի ներքս ջամբեն»:

Ուղղ. փաղաքշանօք և քաղցրաբանո-  
քստմբ: Նաև ըստ կիտաղրութեան. «իբրև  
մեղու քաղցրութեամբ, ողջունին Քրիս-  
տոսի, զամպարշտութեան են»:

## ԻԲ.

էջ 48. տող 12. «Զի Սատուած մի  
է, անծին, միայն անիշխան, անարատ»  
են:

Ուղղ. յոյնն անիշխան? իբր անակիզքն  
միահեծան, ամենակալ:

## ԻԳ.

էջ 53. տող 12. «Զի արեգակն իբրև  
ետես զաւերն նշխանայ պակասեցաւ, կո-  
րեաւ, սայթաքեցաւ զդրութեամբ»:

Ուղղ. յոյնն նշտակեալ. Արեգակն Աս-  
տուծոյ պատուիրանին հնազանդելով ան-  
շարժ մնաց իւր տեղը, բայց երեսը ծածկեց.  
«զի ոչ կարաց հանդարտել տեսեալն  
Տեառնն տեսագնաց, Տես էջ 109 տող  
2, ուր նշխանայի դիմաց օրինակ մի դնէ  
նշտակեալ: Ծան. էջ 122. նոյն էջ 323.  
ուր դարձեալ նշտակեալ է իմաստը»:

## ԻԴ.

էջ 54. տող 20. «Եւ վկայ նորա յա-  
րութեանն (Քրիստոսի) երկոտասան աշա-  
կերտքն են. ոչ բանիւր լիկօք շնորհնայ  
վկայէին, այլ մինչև ի տանջանս, ի քար-  
շանս, և ի մահունս ի վերայ ճշմարիտ  
յարութեանն պատրաստեալք»:

Ուղղ. շարժեալ վկայէին? Առաքելոց  
համար ըսուած է առատանայիկ ի պատմել  
զյարութիւն Տեառն:

## ԻԵ.

Էջ 59. տող 9. «Որ ի վերայ տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի ի նմանութիւն աղանոյ իջանէր, որ յօրէնս և ի մարգարէս զօրացաւ, որ այժմիկ ի ժամանակի մկրտութեանս զորոյն զոգիս և զմարմինս ձեր. որով կարօտին ամենայն մտաւոր և հոգևոր, և խնդրէ սրբութիւն ի նմանէ»։  
Ուղղ. որով կարօտին ամենայն մտաւոր բնութիւնը։

## ԻԶ.

Էջ 58. տող 3. «Զի պարտ և պատշաճ իցէ վասն աստուածեղէն և սուրբ խորհրդոյն հաւատոցս, և մի որ փոքրիկ ինչ բան իցէ, առանց վկայութեան զրոց սրբոց ցուցանել, և ո՛չ տարապարտոց մտահաճոյ բանիւր պաճուճելեօք թօթափեալ»։

Ուղղ. բանիւր պաճուճելեօք չոթափել? Ս. Հայրս կ'ուզէ ամեն մի փոքր բան, հաւատքի վերաբերեալ, սուրբ գրքի խօսքերով հաստատել և ոչ թէ հարեանցի դատարկ ճարտարախօսութեամբ վրայէն անցնիլ։

## ԻԷ.

Էջ 59. տող 29. «Անմահ են ոգիք, և ամենայն ոգիք նման են միմեանց աբանց և կանանց. բայց անդամքն ընտրեալ են ի միմեանց։ Ոչ գոյ դաս ոգի ըստ ծննդեան բուսոյն արդարագնաց. այլ ի բարուց անտի են, երկողքինն՝ միաձև միաճանաչման յամենայնի բարք հոգւոցն»։

Ուղղ. — Ոչ գոյ դաս ոգոց ըստ ծննդեան բուսոյն արդարագնաց, այլ ի բոսոյ բարուց անտի են երկողքինն, միաձև միաճանաչման յամենայնի բարք հոգւոցն»։ Ս. Հայրն հաւաստել կամի հակառակ հեթանոս իմաստասիրաց ոմանց վարդապետութեան՝ թէ այլ և կին մարդոց հոգիքն հաւասար են, մարմինը միայն կը տարբերի. և ոչ որտօնեայ հոգիք կան ի ծննդենէ արդար և սուրբ

լինելու, այլ անձնիշխան կամքն կախուած է բարոյական գործերը, նոյն միաւրով հոգւոյ բնութիւնը։ Կիտաղրութեան փոփոխութիւնը և բոսոյ բառի յաւելումն մերն է։ «Հանդարտ է ոչխար, այլ ո՛չ երբէք վասն հանդարտութեանս պսակեցաւ, քան զի հանդարտութիւն ո՛չ ի կամաց է, այլ ի բարոց բոսոյ ծննդեան ծնեալ որ ընդ նմա»։

## ԻԸ.

Էջ 59. տող 24. «Զայս իւրեանց խցին»։  
Ուղղ. Զականչս իւրեանց խցին. և կամ Զաչս իւրեանց կափուցին։

## ԻԹ.

Էջ 85. տող 21. «Մեր գործ է յարկանել զարծաթն ի սեղոս, Աստուած ի ձէնջ պահանջէ զբանս աւանդոյդ»։

Ուղղ. ի սեղանաւորս. տես Աւետարան Մատթ. ԻԵ. 27։

## Լ.

Էջ 93. տող 14. «Քանզի աստուածապէս հաղորդ է հայրութեան Որդին միածին ծնեալ. գիտէ զծնիչն իւր, և որ ծնողն է, գիտէ զծնեալն իւր»։

Ուղղ. Կիտաղրութիւնք. Քանզի աստուածապէս հաղորդ է հայրութեան Որդին միածին. ծնեալ՝ գիտէ զծնիչն իւր, և որ ծնողն է՝ գիտէ զծնեալն իւր։

## ԼԱ.

Էջ 93. տող 28. «Շատ է ձեզ առ աստուածապաշտութիւն անդրայնչափ միայն գիտել, եթէ ունիմք Աստուած, զմին Աստուած, զԱստուած որ էն միշտ. նման անձին իւրում, որոյ հայր չիք այլ որ, զոր ոչ ոք ետես» են։

Ուղղ. Կիտաղրութիւն. Եթէ ունիմք Աստուած, զմին Աստուած, Աստուած՝ որ էն միշտ նման անձին իւրում. են։

Որովհետև հերետապետայր այլ և այլ դէմս կ'ընծայէին Հօր Աստուծոյ, ուստի Ս. Հայրս կ'ըսէ. Թէ մեր Աստուածը մէկ է, և միշտ նման իւր անձին, անփոփոխելի, յաւիտենական:

## ԼԲ.

Էջ 98. տող 10. «Եւ շանդիկս»: Ուղղ. շանթիս ևայլն:

## ԼԳ.

Էջ 100. տող 9. «Արդ եկայք հարցցուր մեք զնոսա, զինչ ասեն վասն բարերարին Աստուծոյ. կարող է, Թէ տկար. զի եթէ կարող է, ապա ուստի՝ եղև չար, իսկ ակամայ նորա եղև»:

Ուղղ. «Զինչ ասեն վասն բարերարին Աստուծոյ. կարող է, Թէ տկար: Զի եթէ կարող է, ապա ուստի՝ եղև չարն. իսկ երբ տկար, ակամայ նորա եղև»: Հարկաւոր է ն դիմորոշն, որ է հակառակ բարւոյն: Եթէ կարող չէր Աստուած, ուրեմն տկար էր, որով առանց ուզելուն եղաւ չարն հաւասարազօր Աստուծոյ:

## ԼԴ.

Էջ 108. տող 19. «Դարձեալ զի մի յանուանէ անտի ծանիցեն զնա (Մանի), Բոյր? անուն եղ անձին իւրում, զի գոյին նմա անդ հակառակորդը, որ միերեւանցն էին քուրմը պարսից»:

Ուղղ. Բուդդայ անուն եղ... Միթրեանց Mithiras, Միհրական քուրմը պարսից:

## ԼԵ.

Էջ 115. տող 18. «Եւ ըստ պարսից օրինակին զմորթն հանել հրամայէր զմանեայ, և զմարմինն ամենայն գէշ հրամայէր գազանաց. և զչարեաց խորհրդոց ամանն զմորթն հանեալ մոմնեալ իբրև զպարկ՝ ի վերայ դրաց քաղաքին հրամայէր փշել և դնել»:

Ուղղ. Եւ ըստ պարսից օրինակին (սոփրութեան) զմորթն տիկ հանել... և զմարմինն ամենայն գէշ հրամայէր արկանել զազանաց:

## ԼԶ.

Էջ 116. տող 1. «Մի ոք մատիցէ առ ոգեկորոյս մանիքեցիսն որ ի Թըջած յարդից գտրտմութիւն պահոցն կեղծաւորին. որ դարովն զարարիչ կերակրոցն, և յանոյշ յանոյշ կերակուրսն որկորստութեամբ հագածին»:

Ուղղ. Որկորստութեամբ աղանձն:

## ԼԷ.

Էջ 116. տող 20. «Այ դատարկութեան որդիք մանիքեցիք. ինքեանք անգործք, և զգործոցն զկոչս և զվաստակս ուտեն»:

Ուղղ. Եւ զգործողացն զոտոչս և զվաստակս ուտեն: Ըստ այնմ՝ որ ուտեն զտունս այրեաց պատճառանօք:

## ԼԸ.

Էջ 118. տող 10. «Պատուիրէ զայն սուրբ եկեղեցի և ուսուցանէ. և մերձեայ ի խոհեր, զի մի դու զխոհերաւն թաւալիցիս: Պատմե՛ զվէրս զայս, զի դու վէրս մի՛ առցես»:

Ուղղ. մի՛ մերձեար ի խոհեր... պատե՛ զվէրս:

## ԼԹ.

Էջ 119. տող 25. «Ատեաջիր դու և որ երբեմն յայնպիսի կարծիսն կարծեօք կարծեալ իցեն, և ոչ քաջում ժամանակօք յապաշխարութիւն դարձեալ իցեն»:

Ուղղ. Յայնպիսի կարծիսն կործանեալ իցեն...

## Խ.

Էջ 120. տող 2. «Ծանրջիր դու զվար-

դապետութիւնդ: Լիջիւր ընտիր ստացաւ տրոսց վաճառական:»

Ուղղ. յոյն ունի սեղանաւոր:

### ԽԱ.

Էջ 131. տող 22. «Իսկ մարդկան, որպէս ասացաւ, յորջորջանօք հայր կոչեցաւ. իսկ Քրիստոսի միայն իսկութեամբ բնութեամբ, և ոչ յորջորջանօք է Աստուած հայր, և մարդկան ժամանակօք, իսկ Քրիստոսի յառաջ քան զժամանակս և զյաւիտեանս, որպէս և ինքն ասաց: «Եւ արդ փառաւորեա՛ զիս Հայր փառօքն, զոր ունէի առ քեզ Հայր յառաջ քան զաշխարհս»:

Ուղղ. կիտաղրութիւնք. իսկ Քրիստոսի միայն իսկութեամբ բնութեամբ և ոչ յորջորջանօք. է Աստուած հայր և մարդկանս ժամանակօք, իսկ Քրիստոսի յառաջ քան զժամանակս և զյաւիտեանս, որպէս և ինքն ասաց: Եւ արդ են:

### ԽԲ.

Էջ 140. տող 1. «Արդ յայտ եղև, եթէ ոչինչ պակասութիւն զօրութեանցն աստուածութեան, Զի վասն նորա ասէ զիր, թէ «Ամենայն ինչ ծառայ քո են» . ամենայն ինչ արդարեւ ծառայ է նորա. բայց միայն որ որդին է, զի զատ է յամենայնէ:

Ուղղ. զօրութեանցն է աստուածութեան:... Բայց միայն որ Որդին է, զի ազատ է յամենայնէ: Ամենայն արարածք հոգեղէնք և բանականք ծառայք են աստուածութեան, բայց ի Որդին՝ որ ազատ է և Տէր ամենայնի ընդ Հօր. իսկ յոյն յաւելու և զՄ. Հոգին:

### ԽԳ.

Էջ 140. տող 16. «Զայս բան ի փորձ գիտաց և Նաբուգոդոնոսոր արքայ»:

Ուղղ. ի փորձայ. իւր անձի փորձով իմացաւ նա:

(Շարունակիլի)

Հ. ԳԱՐԲ. ՆԱԼԱԳՅԵՏԵԱՆ

## ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՄԱՇՏՈՑԻ ՄԷՋ

ԾԱՆՕԹ. — Երկու տեսակ Մաշտոց ունինք. առաջինը, որ կը կոչուի պարզապէս Մաշտոց կամ Փոքր Մաշտոց, կը պարուենակէ հասարակ կեանքի մէջ պատահող սովորական արարողութիւնները, ինչպէս Մկրտութիւն, Պսակ, Թաղում են: Երկրորդը՝ որ կը կոչուի Մեծ կամ Մայր Մաշտոց, այս բոլորին հետ կը պարուենակէ նաև մի քանի ուրիշ ոչ-սովորական արարողութիւններ, ինչպէս՝ Քահանայի ձեռնադրութիւն, Թաղում են: Փոքր Մաշտոցը շատ անգամ տպուած է. վերջին և մաքուր տպագրութիւն մ'է Էջմիածնի 1894 թուի տիպը. ընդհակառակը Մայր Մաշտոցը քիչ անգամ տպուած է և եղած օրինակներն ալ շատ հազուադիւտ են:

Այստեղ կը հաւաքեմ Մաշտոցի բոլոր այն բառերը՝ որոնք չկան Առձեռնի մէջ: Գործածած եմ Էջմիածնի 1894 թուի փոքր Մաշտոցը (զոր կը համառոտագրեմ Մաշտ.) և երկու Գոթ Մաշտոց, տպ. Պօլիս 1714 և 1807. (առաջինը կը համառոտագրեմ Մ. Մաշտ. 1714, իսկ երկրորդը՝ պարզապէս Մ. Մաշտ.):

Փոքր Մաշտոցը ամբողջապէս կը պարունակուի Մայր Մաշտոցին մէջ. բայց որովհետեւ այս վերջինը շատ հազուադիւտ է, ուստի վկայութիւնները մէջ կը բերեմ փոքր Մաշտոցէն: Բայց Մեծ Մաշտոցներն ալ իրարմէ զանազանութիւն ունին. զըլխաւոր զանազանութիւնը կը կայանայ ազօթքներուն մէջ: Որոնք մէկուն մէջ աւելի երկար, միւսին մէջ կրճատ ձևով են: Կան նաև արարողութեանց մէջ տարբերութիւններ: Այսպէս օրինակ՝ Մ. Մաշտ. 1714 ունի Ռոմալուայի կարգը, որուն համար կ'ըսէ թէ Եփրեմ Խուրիէն թարգմանեց «մեծ զիտապետն Հայոց Գրիգորիս Վրկայասէն» (էջ 550). բայց այս կարգը ամբողջապէս կը պակսի 1807-ի տպագրութեան մէջ: Այս պատճառով է ահա որ կարդացած եմ նաև Մ. Մաշտ. 1714